ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1917—1920)

ՄԱՌԼԵՆ ԲՈՐՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի լուրն Անդրկովկասի աշխատավորները ցնծությամբ ընդունեցին։ Սակայն 1917 թ. աշնանը երկրամասում իշխանությունը գավթեցին բուրժուա-ազգայնական, հեղափոխական կուսակցությունները, միջազգային իմպերիալիզմի անմիջական օգնությամբ ստեղծելով Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարությունը։

Անդրկովկասյան կոմիսարիատի հակաժողովրդական քաղաքականության արդյունքը եղավ այն, որ երկրամասն անջատվեց Սովետական Ռուսաստանից, չճանաչվեց Բրեստի պայմանագիրը, կաղմալուծվեց և երկրամասից հեռացվեց բոլշևիկորեն տրամադրված կովկասյան բանակը, հոգ չտարվեց Անդրկովկասի սահմանների պաշտպանության մասին, որի հետևանքով այնտեղ ներխուժեցին գերմանա-թուրքական բանակները՝ հսկայական ավերածություններ պատճառելով երկրամասին։ Սակայն համաշխարհային պատերազմն ավարտվեց Անտանտի պետությունների հաղթանակով և Մուդրոսի զինադադարի համաձայն գերմանա-թուրքական բանակները պետք է հեռանային Անդրկովկասից, իրենց տեղը զիջելով անգլիական բանակին։ Դեռևս 1918 թ. նոյեմբերի 8-ին Վ. Ի. Լենինը մատնանշեց, որ անգլիական զորքերը պատրաստվում են ներխուժել Անդրկովկաս՝ սեղմելով օղակը ընդդեմ Սովետական Ռուսաստանի՝։

1917 թ. սկզբից ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտնելով Եույակ դաշինքի պետությունների դեմ, անմիջապես լուրջ հետաքրքրություն հանդես բերեց Անդրկովկասի նկատմամբ։ Պրեզիդենտ Վ. Վիլսոնը, ԱՄՆ-ի գավթողական պլանները քողարկելու նպատակով ի լուր ամենքի հայտարարել էր, որ ԱՄՆ-ը իրը ձգտում է «պաշտպանել ժողովուրդների արդար գործը, միջազգային խաղաղությունը և փոքր ազգերի իրավունքները»[2]։ Դեռևս այդ օրերին Անդրկովկասի բոլշևիկները բացահայտեցին ԱՄՆ-ի գավթողական պլանները։ «Պայքար» թերթը Վ. Վիլսոնի այդ հայտարարությունը համարում էր ամերիկյան իմպերիալիզմի գավթողական պլանների քողարկման միջոց, քանի որ ամերիկյան «մեծ դեմոկրատիայի ձգտումները և նրա վերաբերմունքը դեպի իր հարևանները չեն կարող ... այն հավատը ներշնչել, որ Վ. Վիլսոնի հայտարարությունը զուտ մարդասիրական նպատակ է հետապնդում»[3]։

---

1 В. И. Ленин. ПСС, т. 37, с. 162.

2 «Պայքար», 1. I. 1917։

3 Նույն տեղում։

Ցարիզմի տապալումից հետո Անդրկովկասի բոլշևիկյան թերթերը բազմիցս քննադատել են ԱՄՆ-ի զավթողական նպատակները, ցույց տալով, որ ամերիկյան «մեծ դեմոկրատիան» ձգտում է զավթել ողջ աշխարհը։ Փաստեր բերելով այն մասին, որ ԱՄՆ-ը զենքի ուժով ճնշել է ժողովրդական ապրստամբությունը Կուբայում, զինվորական դիկտատուրա է հաստատել Սան-Դոմինգոյում, «Պայքարի» հոդվածագիրն այն հետևությունն էր անում, որ ԱՄՆ-ի «մեծ դեմոկրատիան» «ավազակաբարո միլիարդատերերի կազմակերպած իշխանությունն է, որի ղեկավարն է Վ. Վիլսոնը, դա բոլոր երկրների դեմոկրատիայի սպանիչ փողատերերի ավազակախումբն է»[4]։ Այդ նույն քաղաքականությունը ԱՄՆ-ը 1917—1920 թթ. վարում էր նաև Անդրկովկասի նկատմամբ, այն քողարկելով Հայաստանի մանդատով։ Փարիզի հաշտության կոնֆերանսում ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը ձգտում էր ստանալ Հայաստանի մանդատը, որը նրան հնարավորություն կտար ոչ միայն օգտագործել Անդրկովկասի բնական հարստությունները, այլև ակտիվ հակասովետական պայքարի հանել անդրկովկասյան հանրապետություններին։ Երբ 1919 թ. ամռանը անգլիական զորքերը ստիպված եղան հեռանալ Անդրկովկասից, ԱՄՆ-ի ղեկավար շրջաններին մի պահ թվաց, թե իրենց ձգտումները Անդրկովկասում պետք է հաջողությամբ պսակվեն։ Սկսած այդ ժամանակից՝ ԱՄՆ-ի պրեզիդենտը հատուկ ուշադրություն էր նվիրում Հայաստանին։

Փարիզի հաշտության կոնֆերանսի օրերին ամերիկյան մամուլը հսկայական եռանդով պրոպագանդում էր Հայաստանի մանդատի անհրաժեշտությունը ԱՄՆ-ի համար, միաժամանակ նկարագրելով Հայաստանի բնական հարստությունները և, որ առավել կարևոր է, նրա ստրատեգիական դիրքը։ Ամերիկյան թերթերը բազմաթիվ նյութեր էին տպագրում, թե ինչպես Հայաստանը պետք է դառնա ԱՄՆ-ի արդյունաբերության հումքային բազան[5]։

1919 թ. մայիսի 14-ին «Ազգի խորհուրդը» որոշեց Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին, եթե կոնգրեսը հաստատի այդ որոշումը։ Սակայն Վ. Վիլսոնին միայն Հայաստանը քիչ էր թվում։ Մայիսի 21-ին նա հայտարարեց, որ եթե Հայաստանի ու Կիլիկիայի մանդատը տրվի ԱՄՆ-ին, ապա այն պետք է տարածվի նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի վրա։ Պետք է նշել, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը դրա դեմ չէր առարկում[6], ԱՄՆ-ի այդ ձգտման դեմ չէին առարկում նաև մուսավաթականները։ «Ամերիկան պետք է ստանա ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի ու Ադրբեջանի մանդատը»[7],— հրճվանքով գրում էր «Ազերբայջան» մուսավաթական թերթը։

1919 թ. հունիսին ամերիկյան գնդապետ Հասկելը նշանակվեց Հայաստանի գերագույն կոմիսար՝ Անտանտի կողմից, իսկ հոկտեմբերի 25-ին նախիջևանում հաստատվեց ամերիկյան գեներալ-նահանգապետություն[8]։ Սա-

---

[4] Նույն տեղում, 28. V. 1917։

[5] А. Кунина, Провал американских планов завоевания мирового господства 1917—1920 гг., М., 1969, с. 89.

[6] Авалов, Независимость Грузии в международной политике, Париж, 1924, с. 226.

[7] «Азербайджан», 9. XI. 1919.

[8] Նույն տեղում։

կայն 1919 թ. վերջին և 1920 թ. առաջին ամիսներին Դենիկինի դեմ մղվող պայքարում կարմիր բանակի փայլուն հաջողությունները կործանիչ հարված հասցրին նաև Անդրկովկասում ԱՄՆ-ի զավթողական պլաններին։ Վ. Վիլսոնը 1920 թ. մայիսին կոնգրեսին խնդրեց իրեն լիազորություններ տալ Հայաստանի մանդատը վերցնելու համար, բայց մերժում ստացավ։

Կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդան», ինչպես նաև բոլշևիկյան մյուս թերթերը 1917—1920 թթ. քանիցս անհերքելի փաստերով ցույց են տվել, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը իմպերիալիստական խոշոր գիշատիչներն Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական պլանները բողարկում էին հայկական հարցով, իսկ դրանից հետո՝ Հայաստանի մանդատով։ Ըստ որում, այս վերջինս ամերիկյան իմպերիալիզմին ոչ միայն հնարավորություն պիտի տար զավթելու ողջ Անդրկովկասը, այլև, ինչպես ասվեց, այն հենակետ դարձնելու Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։

Դեռևս 1918 թ. դեկտեմբերին, երբ Անդրկովկասից հեռացող գերմանա-թուրքական բանակներին փոխարինելու էին գալիս անգլիացիները, «Կոմունիստ» թերթը, խոսելով իմպերիալիստական պետությունների զավթողական, հակաժողովրդական, հակասովետական պլանների մասին, գրում էր, որ հաղթողները ձգտում են իրականացնել իրենց վաղեմի իմպերիալիստական պլանները՝ իրար մեջ բաժանել աշխարհը և նորից ստրկացնել աշխարհի, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդներին։ Թերթի կարծիքով «փոքր ժողովուրդների ազատագրման լոզունգը այն քողն է, որով ծածկում են իրենց սև գործերը բոլոր իմպերիալիստ զավթիչները»[9]։ «Կոմունիստը» հայտնում էր, որ իմպերիալիստական խոշոր գիշատիչների զավթողական պլաններին Սովետական Ռուսաստանը հակադրում է «...ժողովուրդների ինքնորոշման սրբազան իրավունքը... որը դուր չի գալիս իմպերիալիստներին, և նրանք բոլորը, թե՛ հաղթողները և թե պարտվողները, աշխատում են տապալել սովետական իշխանությունը՝ փոքր ժողովուրդների անկաշառ պաշտպանին»[10]։

Միջազգային իմպերիալիզմն այդ նպատակին հասնելու համար ձգտում էր հզորացնել ներքին հակահեղափոխական ուժերին, որպեսզի նրանց ձեռքով խեղդի սովետական իշխանությունը։ «Անդրկովկասի իշխող դասակարգերը,— գրում էր «Կոմունիստը»,— որոնք հակահեղափոխական «հանրապետություններին» գլուխ են կանգնած, պատրաստ են գրկաբաց ընդունելու նոր տերերին...։ Այդ հանրապետությունները իրենցից ներկայացնում են որպես հակահեղափոխական որջեր։ Քողարկվելով դեմոկրատական ֆրազներով, որպեսզի խաբեն անդրկովկասյան ժողովուրդներին, այդ հանրապետությունների կառավարություններն իրականում կատարում են կալվածատերերի, աղնվականների և կապիտալիստների կամքը»[11]։ Թերթը գտնում էր, որ անդրկովկասյան «անկախ» հանրապետությունները կյանքի են կոչվել այն բանի համար, որ պայքարեն բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժումների դեմ, խանգարեն նրանց մերձեցումը Սովետական Ռուսաստանի հետ և դրանով իսկ խափանեն սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում։ «Այդ հանրապետությունները,— կարդում ենք թեր-

9 «Կոմունիստ», Մոսկվա, 8. XII. 1918։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում։

թում,— այժմ դառնում են բրիտանական իմպերիալիզմի բազան Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում, իսկ բրիտանական իմպերիալիզմը ձգտում է ստրկացնել ոչ միայն Անդրկովկասի, այլև Ռուսաստանի ժողովուրդներին»[12]։

1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքերի հրամանատարությունը Բաքվում հայտարարեց ռազմական գրություն, արգելվեցին ժողովները, միտինգները, գործադուլները, վերականգնվեց ոստիկանությունը, հաստատվեց ռազմական գրաքննություն և, վերջապես, 1919 թ. մայիսին մտցվեց մահվան պատիժ[13]։

Անգլիացիները Վրաստանում ևս գործում էին նույն ձևով։ 1918 թ. դեկտեմբերի սկզբին պարզ դարձավ, որ վրաց մենշևիկները գերմանական կողմնորոշումը փոխում են անգլիականով։ Դեկտեմբերի 12-ին Բաթումում մենշևիկյան կառավարության ներկայացուցիչը համաձայնվեց երկաթուղային տրանսպորտի օգտագործումը հանձնել անգլիական զորքերի հրամանատարությանը։ Վերջինս հունվարի 21-ին հրաման արձակեց ժողովրդին զինաթափելու մասին. ցրվեցին քաղաքի տեղական իշխանության մարմինները, արգելվեցին գործադուլներն ու բոլշևիկյան կազմակերպությունները, փակվեց «Գոլոս տրուդա», իսկ հետագայում՝ «Ահալի կոմունիստի» թերթը. 1919 թ. հոկտեմբերի 10-ին մտցվեց մահվան պատիժ։ Այս բոլորը «ժիզն նացիոնալնոստեյ» բոլշևիկյան թերթին հիմք էին տալիս գրելու, որ Անդրկովկասում «...անգլիական «դեմոկրատները» շարունակում են գերմանական յունկերների քաղաքականությունը»[14]։ Բացի այս ահավոր բռնություններից, անգլիական օկուպանտները թալանում էին երկրամասի բնական հարստությունները, քաղաքացիների գույքը։ Միայն 1919 թ. հունիսին անգլիացիները Աղրբեջանից տարան 450.000 փութ մազութ, 150.000 փութ նավթ և 75.000 փութ բենզին[15]։ Նրանք իրենց հսկողության տակ վերցրին Կասպից և Սև ծովերի նավահանգիստներն ու նավթը[16]։ Այս նույն քաղաքականությունն անգլիական զորքերը վարում էին նաև Հայաստանում, միաժամանակ աշխատելով ցույց տալ, որ հայ ժողովրդի բարեկամն են և ուզում են լուծել հայկական հարցը։ «Կարմիր դրոշակ» թերթը 1919 թ. ամռանը, անդրադառնալով Հայաստանի նկատմամբ Անտանտի երկրների երկդիմի քաղաքականությանը, համոզիչ փաստերով ցույց էր տալիս, որ նրանք երբեք շահագրգռված չեն եղել հայկական հարցի լուծմամբ և այժմ էլ շարունակում են այդ նույն քաղաքականությունը։ «Ամեն անգամ,— գրում էր թերթը,— երբ եվրոպական պառլամենտներում կամ որևէ միջազգային կոնգրեսում քննվել է Տաճկաստանի ապագա գոյության հարցը, հանդես է եկել նաև հայկական հարցը...։ Եվրոպական բոլոր այն պետությունները, որոնք պաշտպանել են Տաճկաստանի քաղաքական անձեռնմխելիությունն ու անկախությունը, հիմնավորել են միատեսակ ու միանման մի հայեցակետ Հայաստանի նկատմամբ։ Այդ պետությունները պայքարել են Ռուսաստանի ձգտումների դեմ և աշխատել են ամրապնդել ու ուժեղացնել Տաճկաստանի բոլոր վայրերի ընդհա-

12 Նույն տեղում։
13 «Азербайджан», 9. V. 1919.
14 «Жизнь национальностей», 29. I. 1919.
15 «Борьба за победу Советской власти в Азербайджане», Баку, 1957, с. 143.
16 «Набат», 11. VI. 1919.

նուր կապը։ Վարելով այդպիսի քաղաքականություն, նրանք անհրաժեշտաբար պաշտպանել են Տաճկաստանի բռնակալներին և կռվել են փոքր ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ»[17]։ Թերթի կարծիքով հետագայում անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը օգնում էր Գերմանիային՝ ընդդեմ Ռուսաստանի, որի հետևանքով «հայասեր քաղաքագետների կրակոտ ճառերն անհետանում էին Եվրոպական դիվանագետների պրոդաիկ որոշումների մեջ, իսկ իմպերիալիզմի ամենահետևողական ներկայացուցիչները շտապում էին նորից հիմնավորել Տաճկաստանի անձեռնմխելիության անհրաժեշտությունը»[18]։ Խոսելով հայկական հարցում մեծ տերությունների երկդիմի քաղաքականության մասին, «Կարմիր դրոշակը» գրում էր, որ բոլոր միջազգային վեճերի ժամանակ հայկական հարցն առաջ է քաշվել որպես մի «ամենահզոր արգումենտ»։ Հայկական հարցի շուրջ բորբոքվող կրքերն իրենց գագաթնակետին հասան Վերսալյան կոնֆերանսի օրերին։ Դաշնակցական կառավարությունը և Եվրոպայում գտնվող նրա ներկայացուցիչները, մանկամիտ թեթևությամբ, չհասկանալով իմպերիալիստական դիվանագիտության դիրքորոշումը փոքր ազգերի նկատմամբ, շարունակում էին հայկական հարցի լուծումը նրանցից սպասել։ «Անկախ Հայաստանի» շինարարները խորապես հավատացած են,— գրում էր «Կարմիր դրոշակը»,— որ Վ. Վիլսոնի հայտարարությունները բավական են Հայաստանի իրական անկախությունն ապահովելու համար»[19]։ «Զգույշ, խաբում են Զեզ» հոդվածում թերթը գրում էր, որ Անտանտի բռնակալներից չէ, որ հայ ժողովուրդը պետք է ազատություն ստանա։ Իր այդ միտքը հիմնավորելու համար «Կարմիր դրոշակը» բերում էր Բեռլինի (1878) կոնգրեսի օրինակը, ցույց տալով, որ «Կոնգրեսին մասնակցող բոլոր մեծ տերությունները հայերի պաշտպանության քողի տակ ձգտում էին ամրանալ Փոքր Ասիայում... Եվ Վերսալի կոնգրեսն այսօր շատ ավելի տրագիկ պայմանների մեջ է գործում։ Այստեղ կարող են նյութվել դավեր, ոճիրներ, եղեռններ, այո, մենք դրանում հավատացած ենք... սպասել այդ սանդարամետից իսկական ազատություն Հայաստանի ժողովուրդների համար անկարելի է և անըմբռնելի. ահա թե ուր են հասել բուրժուազիայի լակեյները, անգլո-ֆրանս-ամերիկյան իմպերիալիզմի ձեռքին խաղալիք դարձած Հայաստանի ողորմելի ու ապիկար «փբրկիչները»[20]։ Թերթի իրավացի կարծիքով հայկական հարցը կլուծվի միայն Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ[21]։

Հայ բոլշևիկյան մամուլն իրավացիորեն գտնում էր, որ Վերսալյան պայմանագրերը մեծ տերությունների հաղթանակն են, որ ամեն ինչից նրանք են շահում և օգտվում, մինչդեռ Հայաստանի «ղեկավարները» մի այնպիսի հրճվանքի մեջ էին, կարծես արդեն հասած լինեն իրենց նպատակին։ Այդ առթիվ «Կարմիր դրոշակը» գրում էր, որ «անգլո-ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստների հետ միաժամանակ տոնում են իրենց «հաղթանակը» նաև հայ ազգայնականները... Նրանք աշխատում են համոզել, որ այսուհետև հայ ժողովրդի համար կստեղծվի երանավետ մի կացություն, որ այ-

17 «Կարմիր դրոշակ», 8. VI. 1919։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում, 1. VI 1919։
21 Նույն տեղում։

սուՀետև կանՀետանան Հայաստանից ծանր ու տագնապալի օրերը»[22], մի բան, որն ըստ թերթի անՀնար է առանց սոցիալիստական Հեղափոխության Հաղթանակի։

«Կարմիր բանվոր» թերթը, Փարիզի Հաշտության կոնֆերանսի օրերին դիմելով ընթերցողներին, գրում էր, որ մեծ տերությունները Հայկական Հարցը չեն լուծի, քանի որ եթե նրանք այդ ցանկանային, կկանխեին Հայերի կոտորածները 1914—1918 թթ., կօգնեին սովյալ Հայ մանուկներին և ոչ թե Կրոնադատեին Անդրկովկասի աշխատավորներին։ «Մեծ տերությունները, որ անվերջ խոսում էին փոքր ազգերի ազատության մասին, այսօր իրենք են բռնադատում Անդրկովկասի աշխատավորներին...։ Միայն խորհրդային Ռուսաստանն է,— նշում էր թերթը,— որ անշահախնդիր կերպով ցանկանում է լուծել Հայկական Հարցը[23]»։ Դրա փայլուն վկայությունն է, որ սովետական կառավարությունը Հսկայական օգնություն է ցույց տալիս Հայ ժողովրդին, գրում էր թերթը, բերելով բազմաթիվ օրինակներ[24]։

1919 թ. մայիսին «Կարմիր դրոշակ» թերթում «Վերսալյան Հաշտություն և Հայաստան» Հոդվածաշարով Հանդես եկավ Ռ. Բորյանը։ Նա ընդգծում էր, որ «Հաղթող պետությունների բուրժուազիան, Հավատարիմ իր դասակարգային պատգամներին, Վերսալի դահլիճներում խոսքից կանցնի գործի և մի ավելորդ անգամ կապացուցի, որ ֆինանսական օլիգարխիան, տրեստների, սինդիկատների, կարտելների ղեկավարները Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում և Իտալիայում այսօր մի նպատակ ունեն միայն, որքան Հնարավոր է աջակցել իրենց կառավարություններին, որպեսզի խոշոր տնտեսական նվաճումներով պսակվի նրանց պատերազմական Հաղթանակն ու ամուր Հիմքերի վրա դրվի Վերսալում կնքվող «Հաշտության» պայմանագիրը»[25]։ Մեծ տերությունների ղեկավարները Վերսալում որքան էլ խոսեն փոքր ժողովուրդների մասին, շարունակում էր Ռ. Բորյանը, մտածում են միայն իրենց նվաճողական ձգտումների իրականացման մասին, որովՀետև դա «խոշոր ավազակախմբերի ոՀմակ է, դաստիարակված ֆինանսական օլիգարխիայի տիրապետության դարում՝ միջազգային իմպերիալիզմի զարգացման վերջին շրջանում»[26]։ Հոդվածագիրը գտնում էր, որ Վերսալում Հավաքված Հաղթողները մտահոգության երկու առարկա ունեին։ Նախ նրանք աշխատում էին «Հաղթվածներին դնել տնտեսական և քաղաքական այնպիսի պայմանների մեջ, որ նրանք երբեք չկարողանան սպառնալ այսօրվա Հաղթողների շահերին... և մյուս կողմից լայն կոալիցիա ստեղծել ընդդեմ բոլշևիզմի»[27]։ Այս վերջին Հարցում Հաղթողները և պարտվածները միասնական էին, որովՀետև Սովետական Ռուսաստանն իր քաղաքական ու տնտեսական կարգով վտանգ էր սպառնում բուրժուական կարգերին։ Բոլշևիզմի նկատմամբ ունեցած այս վախով պետք է բացատրել այն փաստը, որ թե՛ գերմանական բլոկի պետությունները և թե Անտանտը նպաստում էին Ռուսաստանի ծայրամասերում հակասովետական «Հանրա-

22 Նույն տեղում։
23 «Կարմիր բանվոր», 19. X. 1919։
24 Նույն տեղում։
25 «Կարմիր դրոշակ», 27. VII. 1919։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում։

պետություններին» ստեղծելը և հզորացմանը։ Խոսելով կոնկրետ Անդրկովկասի մասին, Բ. Բորյանն ընդգծում էր, որ այնտեղ գոյություն ունեցող ազգային «անկախ» հանրապետությունները սկզբում գերմանա-թուրքական, իսկ հետո Անտանտի երկրների հլու հնազանդ կամակատարն էին և ոչ թե նրանց համահավասար «դաշնակիցը»։ Ճնշված ազգերի «ազատ» հանրապետությունների կառավարություններն իրենց քաղաքականությամբ կույր գործիք էին դարձել միջազգային իմպերիալիզմի ձեռքին։ Ազգերի ազատությունը նրանք կապում էին ոչ թե ժողովրդի ակտիվ պայքարի, այլ մեծ տերությունների մարդասիրական զգացմունքների ու բարի ցանկությունների հետ։ Պատմությունը, սակայն, մեկ անգամ չէ ցույց տվել, որ «Մեծ տերությունների մարդասիրական զգացմունքներն ու բարի ցանկությունները փոքր ազգերին ազատություն ու անկախություն տալ չեն կարող... այդ բանն արդեն սկսել են հասկանալ ճնշված ազգերի աշխատավոր մասսաները, որոնք տեսնելով ու զգալով իրենց ուսերի վրա փայփայած ու «ազատ» հայրենիքի ծանրությունը և եվրոպական դիվանագետների խոսքն ու գործը, կամաց-կամաց սթափվում են»[28]։

1919 թ. Անտանտի երկրները, մասնավորապես Անգլիան, տեր ու սնօրեն էին Կովկասում, այդ թվում և Հայաստանում, իսկ Երևանի փողոցներում տասնյակ սովամահ դիակներ էին փռված. և դա այն ժամանակ, երբ Հյուսիսային Կովկասում հացի հսկայական պաշարներ կային։ Անտանտի կառավարությունները, գրում էր Բ. Բորյանը, առանց որևէ դժվարության կարող էին հաց հասցնել սովից մահացող հայ ժողովրդին, բայց այդ մասին նրանք չէին մտածում։ Միջազգային բուրժուազիայի համար կարևորը շահն է և ոչ թե մի բուռ հայերի սովամահ լինելը[29], եզրակացնում էր հոդվածագիրը։

Անդրկովկասի նկատմամբ միջազգային իմպերիալիզմի զավթողական պլանների քննադատությանն է նվիրված Հ. Հովսեփյանի «Փոքր ազգերը և իմպերիալիզմը» հոդվածը։ Նրանում հեղինակը իրավացիորեն գտնում է, որ մեծ տերությունները ձգտում են տնտեսապես ու քաղաքականապես իրենց ենթարկել բոլոր փոքր պետություններին, չնայած անվերջ խոսում են նրանց «ազատության ու անկախության» մասին։ Հոդվածագրի կարծիքով այդպիսի ազատություն կտա միայն սոցիալիստական հեղափոխությունը և կոմունիստական կուսակցությունը։ «Կոմունիստական կուսակցությունը,— գրում էր Հ. Հովսեփյանը,— հանուն կոմունիզմի հաղթանակի շահագրգռված է փոքր ու ճնշված ազգերի ազատագրման մեջ, որովհետև ազատագրել ճնշված ազգերին հեղափոխական պրոլետարիատի համար նշանակում է ջախջախել իմպերիալիզմը»[30]։

«Կարմիր բանվոր» թերթը իրավացիորեն գտնում էր, որ անգլիական զորքերի ներկայությունն Անդրկովկասում տեղի ժողովուրդներին ոչ միայն ազատություն չբերեց, այլև ավելի վատթարացրեց նրանց վիճակը, երկրամասը վերածելով արյունի ու ավերակների թատերաբեմի։ «Անգլիական զորքերը,— գրում էր թերթը,— Անդրկովկասում՝ պատերազմների, սովի, սպանությունների, բանտերի միջոցով պաշտպանում են իրենց սեփական կապի-

28 Նույն տեղում, 3. VIII. 1919։
29 Նույն տեղում, 10. VIII. 1919։
30 Նույն տեղում, 20. VII. 1919։

տալիստների շահերը»[31], «Կարմիր բանվորը» խոսելով Անգլիայի պրեմիեր մինիստր Լ. Ջորջի և ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնի այն հայտարարության մասին, որ «բոլոր փոքր ազգերի հարցը պետք է արդարացիորեն լուծվի», գրում էր. «Թվում է, թե դարավոր տարուբերումից հետո քաղաքակիրթ աշխարհը վերջապես վճռեց բաց անել տաճկական բանտի դռները և ազատել տանջված ու զրկված ժողովուրդներին։ Բայց դժբախտաբար իմպերիալիստները փաստորեն հրաժարվեցին ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքից։ Նրանք մանր ազգերի վրայի տաճկական լուծը փոխարինում են եվրոպականով»[32]։ Իմպերիալիստական պետությունները, շարունակում էր Թերթը, լինեն դրանք «դեմոկրատական», թե միապետական, միայն իրենց շահերից ելնելով են խոսում փոքր ժողովուրդների ազատագրման մասին և «ամեն անգամ ցույց են տալիս իրենց արյունարբու և հրեշավոր ժանիքները բոլոր ժողովուրդներին»[33]։ Թերթի կարծիքով մեծ պետություններն ընդունակ են միայն «կեղեքել և հարստահարել, շահագործել և ճնշել այն ազգերին ու ժողովուրդներին, որոնք ընկնում են այդ գազանի՝ իմպերիալիզմի, ահռելի ցանցը»[34]։ «Կարմիր բանվորի» կարծիքով իմպերիալիստական խոշոր պետություններն ավազակային հարձակումների և թալանի միջոցով են իրականացնում «ազգերի ինքնորոշման», «մարդասիրության» և իրավունքի» գաղափարները։ Խոսքով «ազգերի ու համայն մարդկության պաշտպան», գործով նրանց տուներ քանդող, խոսքով «Բարոյականության և ազատագրության ջերմեռանդ կողմնակից», իրականում բարոյական բոլոր տարրական նորմաները ոտնահարող, ահա այն երկդիմի քաղաքականությունը, որ բնորոշ է բոլոր իմպերիալիստների համար, գրում էր Թերթը[35]։ «Հայ ժողովրդի փրկությունը կիրագործվի ոչ թե Լ. Ջորջի դռները մաշելով, կամ Կլեմանսոյին արձան կանգնեցնելով և ոչ էլ ողորմելի հույսեր տածելով դեպի համաշխարհային պրոլետարիատի դահիճները ու նրանց խունկ ծխելով։ Փրկության միակ ելքն է համերաշխության ձեռք մեկնել սոցիալիստական առաջին երկրին»[36], — գրում էր բոլշևիկյան «Պահակ» թերթը։

Բաքվում ռուսերենով հրատարակվող «Նաբաթ» թերթը 1919 թ. մայիսին անդրադառնալով Անդրկովկասում Անտանտի երկրների նվաճողական քաղաքականությանը, ընդգծում էր, որ դրան օգնում են երկրամասի հակահեղափոխական կառավարությունները։ «Մեկի հեռանալը և մյուսի գալը» հոդվածում Թերթը մերկացնում էր օտարերկրյա ինտերվենտների և բուրժուա-ազգայնական կառավարությունների հակաժողովրդական քաղաքականությունը։ Խոսելով այն մասին, որ Անդրկովկասից հեռացող անգլիական զորքերին փոխարինելու են գալիս իտալացիները, Թերթը գրում էր, թե խնդիրն այն չէ, թե ով է գնում և ով է գալիս, այլ այն, որ այդ մասին ժողովրդին չեն էլ հարցնում։ Այն բանից հետո, երբ երկրամասը կտրել են Սովետական Ռուսաստանից, նրա բանվոր դասակարգից, Անդրկովկասը դարձել է իմպերիալիստական պետությունների զավթողական ձգտումների առար-

31 «Կարմիր բանվոր», 10. VIII. 1919։
32 Նույն տեղում, 24. III. 1919։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում։
35 Նույն տեղում։
36 «Պահակ», 6. I. 1920։

կան[37]։ Այդ գավթումների համար, շարունակում էր «Նաբաթը», միանգամայն բարենպաստ պայմաններ էին ստեղծել իրենք՝ մենշևիկները, մուսավաթականները և դաշնակցականները։ Անդրկովկասյան ժողովուրդների ողբերգությունն այն է, որ նրանց թալանում էին, բայց այնպես էին դա ներկայացնում, որ իբր ժողովուրդն ինքն է հրավիրել օտարերկրյա օկուպանտներին։ Թերթի կարծիքով ժողովրդի այդ ատելի թշնամիներին գրկաբաց ընդունում են ոչ թե Անդրկովկասի՝ ժողովուրդները, այլ ժորդանիաները, դեդեչկորիները, չխեիձեները և նրանց նման այլ «սոցիալիստ» դավաճանները, «որոնք ողջունում էին իմպերիալիստների մուտքը Անդրկովկաս, խաբելով աշխատավորներին, թե իբր Անտանտի զորքերը գալիս են, որպեսզի՝ պաշտպանեն երկրամասի ժողովուրդների շահերը և անգամ ռուսական մեծ հեղափոխության նվաճումները»[38]։ Դեդեչկորին, Մերեթելին, Ժորդանիան, խատիսովը գովաբանում էին այդ «ազատ, դեմոկրատական» երկրներին, հայտարարում, թե իբր «անգլիական իմպերիալիզմը ազատության օրրանն է, Ֆրանսիան հեղափոխության Հայրենիքն է, Ամերիկան ամենադեմոկրատականն է», իսկ քանի որ «վրացական, հայկական և մուսուլմանական հակահեղափոխականները սիրում են և՛ «դեմոկրատիան», և՛ «ազատությունը», և՛ «հեղափոխությունը», ուստի ողջունում են նրանց բանակներին Անդրկովկասում»[39],— գրում էր «Նաբաթը»։

Թերթի ասելով մենշևիկյան հուդաների ճառերը ոչ մի ազդեցություն չունեցան «դեմոկրատ» անգլիացիների վրա. նրանք իրենց գործը լավ գիտեին և դեմոկրատիա խաղալու ժամանակը չէր։ Նրանք եկել էին ճնշելու հեղափոխությունը, թալանելու երկրամասի ժողովուրդներին և այդ բոլորը նրանք կատարում էին հաջողությամբ, շնորհիվ Անդրկովկասի բուրժուա-ազգայնական կառավարությունների ջերմ օգնության[40]։ Թերթի կարծիքով մենշևիկները շատ լավ գիտեն, թե անգլիական գաղութարարներն ինչպիսի անմարդկային մեթոդներով են ճնշում ոչ միայն Հնդկաստանի, այլև իրենց իսկ երկրի ժողովրդին։ «Սոցիալիստ» մենշևիկները լռում էին այն մասին, թե իմպերիալիստական կառավարությունները ինչպես են վերաբերվում պրոլետարական շարժումներին և առհասարակ ինչ պայմաններում են գտնվում այդ երկրների աշխատավորները։ Օգտվելով այդ բոլորից, ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստները «հաջողությամբ շարունակում են իրենց գավթողական քաղաքականությունը, նրանք ամենուր ցանցեր են դնում, դավիր են նյութում, ազգամիջյան թշնամանք հրահրում և այդ բոլորի հետևանքով ամբողջովին իրենց ձեռքն են վերցրել ողջ Անդրկովկասը»[41]։ Անդրկովկասյան Հանրապետությունների «անկախությունը», որի մասին ամենուր գոռում էին դավաճան «սոցիալիստները», ի վերջո դուրս եկավ դատարկ պատրանք և ինքնախաբեություն։ Անդրկովկասի «անկախ» Հանրապետությունների կառավարություններն անզոր էին որևէ բան անելու առանց Անտանտի իմպերիալիստների թույլտվության։ Իսկ իմպերիալիստների ախորժակը գնալով

---

37 «Набат», 17 V. 1919.

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

ավելի էր գրգռվում։ Նրանք ոչ միայն թալանում էին ամեն ինչ, այլև իրենց սպասավոր էին դարձրել անդրկովկասյան կառավարություններին։ Թերթի կարծիքով Անդրկովկասի «անկախ» հանրապետությունների կառավարությունների հակահեղափոխական, հակաժողովրդական քաղաքականության հետևանքով երկրամասում ծաղկում է իմպերիալիստների զավթողական քաղաքականությունը։ Դա անսքող դավաճանություն էր հրկրամասի աշխատավորների կենսական շահերի նկատմամբ։ Մարդիկ, որոնք անվերջ գոռում էին անկախության մասին, այդ անկախության իսկական դավաճանները դարձան։ Այդ առթիվ «նաբաթ» թերթը, քննադատելով մենշևիկյան «Երթոբային», որն իր 104-րդ համարում գրում էր, թե «անգլիական կառավարության և վրաց ժողովրդի շահերը միևնույնն են», նշում էր. «Մեր խնդիրն է մերկացնել այս խաբեությունը, ցույց տալ սոցիալ-դավաճան մենշևիկների, մուսավաթականների և դաշնակցականների բացահայտ հակահեղափոխական, ազգակործան քաղաքականությունը, կոչ անել մասսաներին՝ զենքով պայքարել այդ եռյակ ոհմակի և նրանց իմպերիալիստական հովանավորների դեմ։ Իսկ մինչ այդ պարոն գեգեչկորիները, ժորդանիաները, չխեիձեները թող երգեն գովեստի խոսքեր իմպերիալիստ զավթիչների հասցեին։ Մոտ է նրանց կործանման ժամը»[42]։ «նաբաթ» թերթը դիմելով երկրամասի աշխատավորներին, գրում էր, որ «Մեր խնդիրն է նախ և առաջ մերկացնել միջազգային իմպերիալիզմի բոլոր ոճիրները Անդրկովկասի աշխատավորների նկատմամբ»[43]։ Հարկ է նշել, որ այս խնդիրը Անդրկովկասի բոլշևիկյան թերթերը պատվով կատարեցին։

Միջազգային իմպերիալիզմի զավթողական պլանների մերկացմամբ հանդես էր գալիս նաև Թիֆլիսում հրատարակվող «Վոլնա» բոլշևիկյան թերթը։ Այս թերթի բոլոր համարներում կան հոդվածներ, որոնցում ընդգծվում էր, որ անգլիացիները, օկուպացնելով Անդրկովկասը, ոչ միայն թալանում են երկրամասի նյութական արժեքները և ճնշում հեղափոխական շարժումները, այլև ձգտում են խեղդել ռուսական մեծ հեղափոխության նվաճումները[44]։

Անգլիական օկուպանտների հակաժողովրդական, զավթողական քաղաքականության քննադատությամբ հաճախակի հանդես էր գալիս «Բաքի ֆեհլե կոնֆերանսինին ախբարի» թերթը, ընդգծելով, որ առանց Սովետական Ռուսաստանի օգնության երկրամասի աշխատավորները իմպերիալիզմի ճիրաններից ազատվել չեն կարող[45]։

«Ցուգարա սադասի» թերթն անդրադառնալով անգլիական օկուպացիոն կորքերի վարքագծին, ընդգծում էր, որ նրանք բացի հեղափոխական շարժումների ճնշումից և Սովետական Ռուսաստանի դեմ պայքարից, բառիս բուն իմաստով թալանում են երկրի նյութական արժեքները և բնակչության

---

42 Նույն տեղում, 19. V. 1919։

43 Նույն տեղում, 17. V. 1919։

44 «Волна», 9. VI. 1919.

45 Տե՛ս այդ թերթի 1919 թ. մայիս-օգոստոս ամիսների համարները։ Այդ մերկացումների համար թերթը մուսավաթական կառավարության որոշմամբ 1919 թ. օգոստոսին փակվեց։ «Ցուգարա սադասի» թերթը օգոստոսի 19-ին հանդես գալով նրա պաշտպանությամբ, գրում էր, որ այն փակվել է, որովհետև «գրում էր ճշմարտությունը «ազատ Ադրբեջանի» մասին»։

գույքը։ «Անգլիացիները,— գրում էր թերթը,— տզրուկի նման ծծում են աշխատավորների արյունը»[46]։ Այդ նույն թերթը «Ի՞նչ է եղել և ի՞նչ պետք է լինի» հոդվածում գրում էր, որ 1918 թ. երկրամասն օկուպացվեց թուրքերի և գերմանացիների կողմից, իսկ այժմ օկուպացվել է «դեմոկրատ» անգլիացիների կողմից, սակայն մուսավաթականները գործը այնպես են ներկայացնում, թե իբր անգլիացիները երկրամասի աշխատավորներին ազատագրել են բարբարոսներից։ Քննադատելով անգլիական օկուպանտներին և նրանց հլու ծառա մուսավաթականներին, թերթն ընդգծում էր, որ Ադրբեջանի անկախությունը կապահովվի միայն այն ժամանակ, երբ իշխանության գլուխ անցնեն բանվորները և գյուղացիները[47]։

1919 թ. ամռանը անգլիական իմպերիալիստների զավթողական պլանների քննադատությամբ հանդես եկան նաև «Մոլոտ», «Պրոլետարիա» և «Բեդնոտա» թերթերը, որոնք բրիտանական զորքերի հրամանատարության պահանջով փակվեցին[48]։ Հարկ է նշել, որ բոլշևիկյան թերթերը հիմնականում փակվում էին անգլիական հրամանատարության պահանջով։ Բերենք բազմաթիվ օրինակներից միայն մեկը։ Բրիտանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Բիշը 1919 թ. հունիսի 11-ին Վրաստանի ներքին գործերի մինիստրին գրում էր, որ բոլշևիկյան «Վոլնա» թերթն իր հոդվածներով վարկաբեկում է անգլիացիներին։ Այդ թերթը, գրում էր Բիշը, հունիսի 5-ին գրել է, որ «անգլիացիները բանսարկության և խաբեության միջոցով ուզում են ստրկացնել Անդրկովկասի ժողովուրդներին»[49]։ Բրիտանական կառավարությունը չի կարող հանդուրժել այդպիսի վիրավորանքները, շարունակում էր Բիշը և պահանջում միջոցներ ձեռնարկել։ Մենշևիկյան կառավարությունն իսկույն փակում է «Վոլնան»։

«Զահմեթ սաղասի» թերթը «Ժողովուրդների ազատությունը, ազգերի անկախությունը և պրոլետարիատի փրկությունը վտանգի տակ է» հոդվածում քննադատելով Անտանտի երկրների զավթողական ձգտումները, Արևելքի բոլոր ժողովուրդներին կոչ էր անում պայքարի դուրս գալ միջազգային իմպերիալիզմի պլանների դեմ, պաշտպանել Սովետական Ռուսաստանին— բոլոր աշխատավորների անկեղծ բարեկամին։ Սովետական իշխանության լոզունգները, գրում էր թերթը, սարսափեցնում են «անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, իտալական և ճապոնական մարդասպան-դահիճներին... մարդկության թշնամիներին, որոնք ստրկության մեջ են պահում Արևելքի աշխատավորներին»[50]։ Ժողովուրդների անկախության այդ թշնամիները, գրում էր թերթը, ամեն ինչ անում են, որպեսզի ոչնչացնեն պրոլետարիատի դիկտատուրան, իշխանությունը նորից հանձնեն նիկոլաևյան ստոր դահիճներ Դենիկինին, Կոլչակին և ուրիշներին։ Դիմելով երկրամասի աշխատավորներին, թերթը շարունակում էր. «Այս օրերին, երբ համաշխարհային դահիճները հավաքվելով Փարիզում, նոր շղթաներ են կռում, որպեսզի ոչրն-

46 «Фугара саласы», 22. VIII. 1919.

47 Նույն տեղում, 24. VIII. 1919։

48 «Մոլոտը» փակվեց 1919 թ. օգոստոսի 14-ին, իսկ «Պրոլետարին» և «Բեդնոտան»՝ օգոստոսի 27-ին։

49 «Борьба за победу Советской власти в Грузии» (документы и материалы), Тбилиси, 1957, с. 434.

50 «Захмет саласы», 13. X. 1919.

չացնեն ժողովուրդների անկախությունը, այդ նույն ժամանակ կարմիր Մոսկվայում երկրագնդի աշխատավորների ներկայացուցիչները հավաքվել են III ինտերնացիոնալի կոնգրեսին... Ստրկության շղթաներում ապրողներ արթնացեք...։ Ազատությունը, անկախությունը և աշխատավորների դիկտատուրան վտանգի տակ է։ Բոլորդ օգնության հասեք բանվորներին և գյուղացիներին»[51]։

«Փարիզի դահիճների քաղաքականությունը Անդրկովկասում» հոդվածում, տպագրված «Ազերբայջան ֆուգարասի» թերթում, Ա. Բայրամովն անդրադառնալով Անտանտի երկրների կառավարությունների հակաժողովրդական քաղաքականությանը, գրում էր, որ Անգլիան ոչ միայն զավթել է Անդրկովկասը, այլև այն ներքաշել է պատերազմի մեջ՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի, ճգնելով այդ կերպ Դենիկինին փրկել վերջնական կործանումից[52]։

Միջազգային իմպերիալիզմի զավթողական պլանների և անդրկովկասյան հակահեղափոխության քննադատությամբ հանդես էր գալիս նաև «Նովի միր» թերթը։ 1920 թ. հունվարին անդրադառնալով աշխատավորների ծանր վիճակին, թերթը դրա հիմնական պատճառը համարում էր այն, որ Անտանտի երկրների պահանջով մուսավաթական, դաշնակցական և մենշևիկյան կառավարությունները ոչ միայն ընդգծված հակասովետական դիրք են գրավել, այլև խզել են տնտեսական կապերը Սովետական Ռուսաստանի հետ, մի բան, որը սպառնում է Անդրկովկասի «աշխատավոր բնակչության ֆիզիկական գոյությանը»[53]։

«Ֆուգարա սադասի» թերթն անդրադառնալով իմպերիալիստական պետությունների նվաճողական ձգտումներին, գրում էր, որ նրանք բոլորն աշխատում են զավթել հենց այն երկրները, ում պաշտպանությամբ հանդես են գալիս։ Այս առումով քննադատելով մուսավաթականներին, դաշնակցականներին և մենշևիկներին, թերթը գրում էր, որ «միայն ազգայնականները, ցերեկային լույսից վախեցող այդ չղջիկները չեն ուզում տեսնել ճշմարտությունը և այսքան համառորեն կառչում են անգլիացիներից»[54]։ Շարունակելով իր միտքը, թերթը նշում էր, որ «ժողովուրդների ազատությունը, նրանց փրկությունը պետք է փնտրել ոչ թե Անգլիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում կամ Փարիզի կոնֆերանսում, այլ աշխատավորների դասակարգային պայքարում...։ Անդրկովկասի իսկական անկախությունը կիրականանա միայն այն ժամանակ, երբ իշխանությունն անցնի բանվորների և գյուղացիների ձեռքը»[55]։

Այսպիսով, 1917—1920 թթ. Անդրկովկասի բոլշևիկյան մամուլի էջերում լայն տեղ է տրվել երկրամասի նկատմամբ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի զավթողական և թալանչիական պլանների մերկացմանը։ Միաժամանակ բոլշևիկյան թերթերը երկրամասի բազմազգ ժողովուրդներին ցույց էին տալիս, որ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի նկրտումներից ձերբազատվելու միակ ճանապարհը մեծ Հոկտեմբերի ուղին է։

51 Նույն տեղում։
52 «Азербайджан фугарасы», 2. 11. 1920.
53 «Новый мир», 29. 1. 1920.
54 «Фугара садасы», 24. VIII. 1919.
55 Նույն տեղում։

РАЗОБЛАЧЕНИЕ ЗАХВАТНИЧЕСКИХ ПЛАНОВ АНГЛО-АМЕРИКАНСКОГО ИМПЕРИАЛИЗМА В БОЛЬШЕВИСТСКОЙ ПЕЧАТИ ЗАКАВКАЗЬЯ (1917—1920)

МАРЛЕН БОРЯН

Резюме

В силу ряда причин после Октябрьской революции Советская власть в Закавказье победила не сразу. Власть захватил блок контрреволюционных партий мусаватистов, дашнаков и меньшевиков, которые отделили Закавказье от Советской России и превратили его в арену нашествия вначале войск Германии и Турции, а затем Антанты.

Материалы большевистской печати свидетельствуют о том, что великие державы до первой мировой войны прикрывали свои захватнические планы в отношении Закавказья армянским вопросом, а после войны—мандатом на Армению. В этом последнем вопросе особое рвение проявил американский империализм, стремясь захватить не только Закавказье, но и весь Ближний Восток. Захватническая политика англо-американского империализма была всесторонне разоблачена в большевистской печати Закавказья 1917—1920 гг.